

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար	12 ձր
սարկիսի	6 "
Վիգուսիսայ	6 "
Արսուսիսիսի	15
համար արեկան	8
Վիգուսիսայ	8

Անտեկիսի համար	3
Տարիս	3
Վիգուսիսայ	1.50

Մանուսկրի սոյր առա-  
քին երեսին համար 40 ս.  
իսկ վերջին երեսի հա-  
մար 20 սանթիմէ երեքին  
սակի սակաւներու համար  
20 սի: զիցի կըլլայ:

Վառձայի համար ձեռքէ 10 սանթիմ

# ՇԱՐՋՈՒՄ

## ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Նախկին և դրան զրկել  
հոլքոգրոսքանս հաւ-  
ցիլն:

Редакция на вестникъ  
«Шаржумъ»  
Варна  
Redaction du journal  
«Charjourn»  
Varna (Bulgarie)

Արսուսիսիսի համար  
ձեռքէ  
( 20 ՍԱՆԹԻՄ )

Պուլկարիոյ համար  
ձեռքէ  
= 15 ՍԱՆԹԻՄ =

Գրութիւնք և՛ չեն տրուիր

«ՇԱՐՋՈՒՄ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄԸ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆՎԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆՆԻՆՎԱԾԱՐԷ

### ՅՈՐԹՈՐ ԱՏԵՖԱՆ ԲՈՐՈՎ

Մանկարար և մասնագէտ սե-  
ռական վարակիչ հիւանդութիւն-  
ներու, վիպիսալ առաջին յիշու-  
նակով ֆրանսական համալսարա-  
նէ, երեք տարի ճիշտով մէջ,  
երեք տարի ալ Ռուստուրի հի-  
անդանոցի մէջ պաշտօնավարե-  
լէ վերջ կրկին ֆրանսա և Վիէն-  
նա գացած է իր մասնագիտու-  
թեանց մէջ կատարելագործուե-  
լու համար:

Արդ եկած հաստատուած է Վառ-  
ձայ:

Գրութիւնք և՛ չեն տրուիր  
Հիւանդներ կընդունի 1.4 կէս-  
օրէն վերջ:

### ԱԶԴ

Ազգային երկսեռ վարժարանաց ա-  
մսկերթի հարցաքննութիւնք պիտի  
սկսին յառաջիկայ իշ. 24 յունիս եւ  
պիտի վերջանան 28 յունիս ուրբաթ  
օր:

Կը հրաւիրուին յարգոյ ծնողք եւ  
պաշտպանք ներկայ գտնուիլ որոշ-  
եալ օրերուն քաջախելութեամբ երկ-  
սեռ ուսանողութիւնը:

Վասն Աստուածատէր  
Յ. Համոյ՝ սն

### ՏԱՆՔ ԱՅՆ, ԻՆՉ ՈՒՅՈՒՄ ԵՆ

Երոստական թերթերը լիքն  
են շարագոյնակ լուրերով Հա-  
յաստանի մասին: Այս անգամ  
ամբողջ աշխարհի մասով լը տես-  
նում է մութի մէջ պատրաստվող  
ահագին ահաւելի ոճիրը և օր ա-  
ռաջ ճիգեր է թափում նրա ա-  
ռաջն առնել: Զգում են և ոճի-  
րին ենթակայ լինելու որոշված  
զոհ հայերը: Նրանք՝ գողահար,  
զիշեթայի սեւ մութի միջով,  
տեսնում են Սուլթան Համիտի  
հրէշային ձեռքը որ տարածվում  
է Հայաստանի երկնքի այն մա-  
սերում, ուր զեռ գոյութիւն ու-  
նեն փոքր ի շատէ կտրիճ ու ինք-

նապաշտպանութեան ընդունակ  
հայեր:

Մահան մանգաղը տարրու-  
րելով գալարվում է մահարբի  
ձեռքը Հայաստանի երկնքում:  
ցնցվում է արհուրեքների և  
տառապանքի աշխարհում ճակա-  
տագրական վտանգին դիմագրա-  
ւող հայ կառոյ: Ըմբոստ տարրը  
և զգալով իր փոքրութիւնը ահ-  
ռելի վտանգի հանդէպ օգնու-  
թիւն, օգնութիւն է աղաղակում:

Ո՞վ պէտք է բաւարարութիւն  
այս երկրում կառոյ, դիմագրա-  
ւող տարրի այդ իրաւացի պա-  
հանջներին: Զէնք, վառոտ,  
քաջ, հմուտ, լուրջ դեկավար-  
ներ են պահանջում անհաւասար  
մտարը յաջողութեամբ առաջ  
տանելու համար, ո՞վ պէտք է  
մատակարարէ այդ բոլորը:

Ի հարկէ մեր յեղափոխական  
մարմինները:

Մահարբի, հրէշային ձեռքը  
գալարվում է նրան ոճիրից չեն  
կարող ետ կասեցնել ճառերը,  
գեղեցիկ գրութիւնները, սե-  
ւանական յեղափոխական կալմա-  
կերպութիւնները, սոփեստու-  
թիւնները, ժողովները և այլ  
չառ աննպատակ յիմարութիւն-  
ներ որ մենք յեղափոխութեան  
անունով գործեցինք ու կատա-  
րեցինք վերջին մի քանի տա-  
րիներում: Վառոտ, գնդակ, հր-  
րացան, գառնի, աարճանակ և  
մարդ, կտրիճ, արի, լուրջ,  
անձնազոհ մարդ են ուղում երկ-  
րից, տառապանքի և արհուրեք-  
ների աշխարհից. այդ պէտք է  
տանը մենք երկրին:

ՎԱՐԴՕ

### ՕՅԻ ԱՄՊԵՐ ՀԱՅՍՏԱՆԻ ՎՐԱՑ

Գերմ. թերթերը սեւ լուրեր կը  
բերեն Հայաստանէն:

«Վեդեր»-Յոյթիւնկո ստացած  
է կ. Պոլսէն հեռու եւտլ տեղի կու-  
թիւնները:

«Մուշէն» եկած նամակ մը ուշադ-  
րութիւն կը հրաւիրէ այն իրողու-  
թեան վրայ, թէ ձիւնի հալելով սիւր  
սած են ոճրագործութիւնները աւե-

լանալ, որոց գոհերը միշտ հայերը կը  
գտնան: Ծորքեր, բռնի գանձուժը  
ամենաստակար վայրագութեամբ յա-  
ռաջ կը տար: Եթէ հարկահաւաք  
պաշտօնեաները քրիստոնեայ գիւղա-  
ցիներէ իրենց ցանկագամին չստի չը  
կարենան խել, այն ատեն օտտիկան  
ներու օգնութեամբ կը ձեռնեն եւ շար-  
չարանքներու կենթարկեն գիւղացի-  
ները: Պիթիւսէն յանձնաժողով մը  
զրկուեցաւ նորերս, որ հարկահա-  
ւաքման մեթոտը պիտի ուսումնասի-  
րէր: Յանձնաժողովը որոշեց, որ փա-  
խտական հայերու յետաձեռնաց տու-  
քերը ջնջուին և բարբոս այն հարկա-  
հաւաքները, որ տուքերու գանձ-  
ման ժամանակ բռնի և կեղծիչ մի-  
ջոցներու դիմած են, պատժուին:  
Բայց այս գեղեցիկ որոշումները միա-  
ցին մեռած տառ: Ամենափոքր նշա-  
նակութիւն անգամ չունեցան անոնք:  
Եւ արդէն չառ պատճառներ կան դա-  
տաստանի մը վճարին կէմ յանդուգն  
և մերժողական դիրք բռնելու հա-  
մար: Թիւրքերը եւ քրիտոքերը երբէք  
չեն պատժուած հայերուն դէմ ոճիր-  
ներ նիւթած բլլալու: համար, ընդ-  
հակառակը հայերը իստօրէն կը պատ-  
ժուին ամենափոքր յանցանքի հա-  
մար: Հայ մը որ ձմերուկ մը գող-  
ցած էր 3 տարուայ բանտարկութեան  
գատապարտուեցաւ: — Անշուշտ թ.  
Դուռը անն բողոք վիճելի կը դարձ-  
նէ: Դուռը մտնող գործակալութիւն  
ներու միջոցաւ միշտ յարբեր կը տա-  
րածէ, թէ հայերու բողոքները չա-  
րափա հնարածոյ դիւտեր են եւ թէ  
գաւառներու մէջ կատարել կարգ սե-  
կանուն կը տիրէ: Ինչպէս դեռ կը  
յիշենք 1894—95ի կոտորածներէն յե-  
տոյ հազարաւոր հայեր Ռուսիա փա-  
խան եւ հոն իրենց կովկասցի ազգա-  
կիցներէն ապաստելութիւն եւ ընդու-  
նելութիւն գտան:

Ռուսիա շատ անգամ փախտական  
ներու վերադարձի խնդիրը հրապա-  
րակ նետեց. բայց երբէք իստօրէն  
չը պահանջեց: — Անցեալ տարի շրջա-  
բերական մը կը հրաւիրէր փախտա-  
կանները ոտու դատակ կամ երկրէն  
գուր ելլել: Ինչպէս մարտի վերջի  
օրը իրենց պայմանագրած տրուեցաւ:

Շատ հայեր չուղեցին ոտու դատակ  
եւ բազմաթիւ խուճրեղով չուղեցին դե-  
պի սանձանագրելու, յոսալով որ ի-  
րենց գիւղերու մէջ հա կատանան ի-  
րենց կարուածները: Բայց թուրք  
պաշտօնեաները իրենց ձեռքը ինկած  
փախտականները ձերբակալեցին և  
քանտ նետեցին: Սանձանագրելի բո-  
լոր բանտերու մէջ տեղ չը լինաց:

Հայոց պատրիարքը Գրան մօտ բո-  
ղոք բարձրացուց:

Պիթիւսէն լուր կուգայ, թէ հրա-  
մանատար Սայիս փոշայ կը պատրաս-  
տուի Սասնոյ վրայ արշաւել:

Սասնոյ հայերը կը վայելեն ինչ  
որ ազատութիւն և իրենց լեռնոտ  
երկրի մէջ քրդական յարձակումե-  
րու կը դիմադրեն յաջող կերպով:

Վերջին տարիներ փորձեցին, Սաս-  
նոյ բարձրաւանդակին վրայ երկու  
մեծ գորանոցներ շինել, բայց ի գուր:  
Կարծիք կայ, թէ Սալիք փոշայ, որ  
համարաւոր Զէքի փոշայի ազգականն  
է, այս ծրագիրը պիտի գործադրէ և  
Սասնոցիները իրենց անկախութեան  
համար պիտի պատժէ:

Հայաստանէն սխուր լուրեր կը բե-  
րէ նաեւ «Պոստա» կ. Պոլսէն մայիս  
5 թուականաւ կը գրեն այս լրագ-  
րին:

«Փոքր Ասիայի հայերու մասին հոս  
նորերս աննպատակ լուրեր հասան:  
Մանաւանդ գանազան պատճառներով  
Սղերդի մէջ յատկապէս Հայերուն  
մէջ յանկարծական սարսափ: Քիւր-  
տները լուր կը տարածեն այս գաւա-  
սին մէջ, թէ նոր ֆէրման մը ելած  
է հայերը ջարդելու համար, ինչ որ  
չուտով գործադրուելու է: Սղերդի  
մեծ շէյխը ֆէղվայ մը հանեց, որու  
մէջ նաեւ մահ կապառնայ բոլոր  
անոնց, որոնք իսլամութիւնը բռնու  
թեամբ ընդունենէ վերջ նորէն իրենց  
քրիստոնէական հաւատքի գիրկ կը  
գտնան: Փանատիկոս միւսլուան-  
ներ այս առիթին օգտուելով սպառ-  
նայիք կը կորոզան այն ամեն հայե-  
րու գլխին, որոնք 1895ի կոտորա-  
ծին ատեն խլամը ընդունած են:

Երիտասարդ քիւրդ մը նորերս ե-  
ռուս պողարի մը մէջ դաշուհի շորս  
հարուածներով սպաննեց 51 տարե-  
կան հայ մը Միւսու Հասմաճեան,  
պաշտօնեաները երբ ոճիրը իմացան  
տեղերէն անգամ չը շարժեցան մար-  
դասպանը պատժելու համար: Կերե-  
ւայ թէ չէյիսի ֆէթվան իրեն ազդե-  
ցութիւնը ունեցած է պաշտօնեանե-  
րուն վրայ ալ: — Նոյնպէս հայոց վը-  
րայ բռնաբարութիւնը կատարուեցան  
Իերա գիւղին մէջ քիւրտերու կողմէ:

Հոս լուր տարածուած է, թէ որ  
եթէնի ապստամբները ջարդած են  
300 թուրք զօրք, Սյս բանը կատա-  
րուած է անգլիական ազդեցութեան  
տակ գտնուող Արդէնի սահմանին մո-  
տերը:

«Բօլ. Կորկուպ» լուր ստացած է կ.  
Պոլսէն, թէ Պէթիւսի հայ գիւղի Սը-

դերը) քնակիչները բոլորովին գաղ-  
թած են: Մտերս հոն քիւրտերու  
կողմէ սպանուեցան 3 հայեր, որու  
վրայ գիւղացիները կեանքի վտանգ  
սեւեռելով իրենց բնակատեղին ձգե-  
ցին: Քիւրտերը գրաւեցին հայերուն  
տուները եւ կալուածները: Կռա-  
վարական պաշտօնեաները լուս ահա-  
նասեաներ հանդիսացան:

Կարավան մը որ Աղերդէն Պիլիւս  
կը ճանապարհորդէր ապրիլ 28 ին  
քիւրտ Ալի Եօնուզէն յարձակում կը  
րեց: Կարավանին մէջ կա, մինակ  
հայ վաճառական մը: Քիւրտը գերի  
վարեց հայ վաճառականը, սպաննեց  
եւ քովը եղած 500 թրքական մէծի-  
սիկէն կողպտեց:

Երեք հայեր, որոնք Մոքս գիւղէն  
Աղերդ կերթային ձերբակալուեցան  
եւ բանտարկութեան դատաւարուե-  
ցան չը նայելով, որ օրինաւոր ան-  
ցագիր ունէին:

Գերմանիա 15 յունիս 1:

ՕՐԵՕՐ

ԹԱԳԱՐՈՒԹԻՒՆԸ ՅԵՏԱԶԳՈՒՄՆ

Էն կարեւոր ու էն ուշագրու-  
թեան արժանի լուրը որ սյուր պիտի  
պահանջուէր, ու պէտք էր ալ պա-  
հանջուիլ, Լոնտոնցիէ մը, պիտի ըլ-  
լար անուշա՞ Անգլիոյ թագաւորին  
թագադրութեան խնդիրը, որ ամիս-  
ներ առաջ արդէն չորս կողմ յուզու-  
մեր յառաջ բերաւ: Եւ որովհետեւ  
այս պահուս խիստ հետաքրքրաշարժ  
միանգամայն ցաւալի կերպարանք  
մը ստացաւ, աւերորդ չենք սեպեր  
զայն ծանօթ սցենը մեր բնիկացոյց  
համառօտակի տեսութեամբ մը:

Վերջին մէկ երկու ամիսը, Անգ-  
ղիացոց համար նա մանաւանդ Լոն-  
տոնաբնակներուն, ուրիշ զէպ կամ  
խնդիր երբէք գոյութիւն չունէր,  
բայց եթէ Թրանսպարի խաղաղութեան  
և իրենց նորոնձայ արքային թագա-  
դրութեան խնդիրը:

Առաջինը հակառակ կարեւորա-  
գոյնը բլլալուն, երկրորդին առջեւ  
կորուեցաւ յանկարծական խանդա-  
վառումէ մը վերջ, և այնուհետեւ,

բոլոր ետանդն ու զօրութիւնը վի-  
ճակուեցաւ վերջինին:

Բովանդակ Լոնտոնը լապտերներու  
և դրօշակներու ներքեւ կը խնդրուի-  
րէն, լուսավառութիւններ, ինչ  
զարդարանքներ, մանաւանդ այն  
ճանապարհներուն վրայ, ուրիշ թա-  
գաւորը պիտի անցնէր, կերպուէր,  
չաքութիւնը ետք:

Ամբողջ հսկայ սրճարաններուն,  
հօգէշներուն և այլ և այլ խանութ-  
ներու ու տուներու աջակ յաստա-  
կերտ նստարաններ բարձրացան, ու-  
րոնք յիմարի նման իրարու ձեռքէ  
կը յափշտակուէին, ոչ թէ կոխով  
այլ գրամով 1, 2 կամ 3 կամ 4 կամ  
5 ոսկի մինչև իսկ մէկ անձի մը հա-  
մար միայն, մէկ ամիսը, պատու-  
հանին մէկ անկիւնը, ուրիշ կարող  
պիտի բլլային իրենց արքային թա-  
գաւորը և թագուհին տեսնել: Իսկ  
Աւէսթմինիսթրի Արքայարանին և Ս:  
Պօլսի Մար եկեղեցւոյն ամբողջօրը  
—հոն գուցէ ամեն մէկ տախտակ ալ  
վարձուած էր այդ բազմին արժանա-  
նալու համար:

Ամբողջ շոգեկառքերը, հեռաւոր  
տեղերէ եկողներուն ալ դիւրութիւն  
մը մատուցանելու կամ երկու օրուան  
արձակուրդը հանգիստ ընելու հա-  
մար, մասամբ մը գինեքը իջեցուցած  
էին սովորականէն, ու, վերջապէս ա-  
մեն ինչ պատրաստ էր, երբ յանկարծ,  
երեքշաբթի օրուան չարագուշակ  
բօթը ամեն փոփաք, ամեն իղձ, ա-  
մեն երեւուն անուրջներ կը խորտակէ,  
կը փչրէ, մէկ խօսքով, յանդուգն և  
սէգ Բրիտանացիին գլխուն ահաւոր  
լախա մը կիշեցնէ. թագաւորը հի-  
ւանդաւ, ահա ինչ կը լսուի ամեն  
կողմէ լրագիր ծախողներէն, իրենց  
ապրանքը քշելու համար ու ամեն ք  
դեղնած ու այլալոյս այդ անհիշու  
լուրէն կը նեղէ դրամը ու անմիջա-  
պէս տենդոտ շարժումներով, էջերը  
կը թվթատէ որպէսզի հետեւանքը  
տեսնէ, ու այս կը շարունակուի  
մինչև չորեքշաբթի գիշեր (յունիս  
25 Ն. Տ.) ամեն մէկ ժամ նոր լուրի  
մը սպասելով, թէ արդեօք կարելի  
պիտի բլլայ յաջորդ օրը ոտքի ելլել  
և թագադրութեան ծէսը կատարել,  
բայց ո՞չ, Անգլիացիին նոր բան մ'աւ  
կը տեսնէ թագադրութիւնը յետա-  
ձգուած կը պոռան ալ թերթերը,

առանց որչազ գազափար մ'այ, տալու  
թէ երբ կրկին տեղի պիտի ունենայ:  
Բժիշկներու հաղորդածէն հետեւցնե-  
լով կամ ամիս մը վերջը և կամ  
գուցէ երբէք... ու բոլոր անոնք,  
որք հեռաւոր երկիրներէ յատկապէս  
եկած էին թագադրութեան ներկայ  
գտնուելու, շատեր կը վախճան թէ  
թագուած տեսնելու զփութութիւնը  
պիտի ունենան:

Ու այս հիւանդութեան հետեւան-  
քը եղաւ և ծախքերու ահագին կո-  
րուստ մը: Ինչպէս քիչ մը վերը  
յայտնեցինք, շոգեկառքեր և այլն,  
դիւրութեան և ամառուան պղտիկ  
արձակուրդ մը ընելու համար, սո-  
վորական գինեքուն վրայ մեծ գեղջեր  
գրած էին և անշուշտ գտնուեցան  
այնպիսիներ, և նոյն իսկ շատեր,  
որք օրուտ քաղելով այդ պատեհօ-  
թեանէն սոմախներ գնած էին և երբ  
հինգշաբթի խանութները բացուեցան  
մեծ մասը փոխանակ արձակուրդի,  
սովորուեցաւ կրկին գործին վերա-  
դառնալ, աւելի պատահեցաւ ա-  
նոնց, որոնք եկած էին Լեռնայի այլ  
և այլ կողմերէն կամ Ամերիկայէն, ու  
չատ հաւանական է բոլոր կարգադ-  
րութիւն տեսնուած էր մինչև յա-  
ջորդ երկուշաբթի օրուան համար,  
որ ամեն ինչ աւարտած կըլլար մին-  
չև այնօր, բայց այժմ սովորուած  
են կամ վերադառնալ և կամ ուրիշ  
ծախքերու մէջ ալ մտնալ, առանց  
գինանալու ապաքինումի որոշ օրն  
ալ:

Մէկդի թողունք զեռ այն մեծ  
շեաները որ եղաւ գործնական հրա-  
պարակին վրայ, ի բայց առեալ ան-  
հատներէ, այլ եւ այլ տեսակէտնե-  
րով:

Էն սխտը եւ գարմանոյի զէպքն  
է որ կը գրուի մի Լեզուի վերջին  
փայլուն պատմութեան էջերուն վը-  
րոյն, եւ վրայ այն ցաւալիութեան  
երբ գլուխը թագ գնելու փոխան ափ  
մը հող ու սեւազարդ սրակ մը դնե-  
լու առիթը գայ:

ՇՈՒՍ

25/28 յունիս  
Լոնտոն



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԵՐԱԾԻՆ

ՍԱՍ Ս.

ԳԼՈՒԽ Դ.

Արդէն կարմիրովէնց դահլիճը լիքն  
էր հիւրերով. կըր Մաղիկեանը մը-  
տաւ սերս: Հիւրերի մեծամասութիւ-  
նը տիկիներն եւ օրիորդներ էին:  
Այդ մարդիկ միայն կարմիրովի եր-  
կու փեռան եւ երեք սղաններն էին,  
մէկէլ ինքը կարմիրովը, մի 70 տա-  
րեկան, զեռ բաւական առոյց ու  
յալթանքամ ձերուներ:

Մաղիկեանի ներս մտնելուն պէս,  
այդ մարդիկ դիմաւորեցին. Մաղիկ-  
եանը նրանց բարեւելուց յետոյ իս-  
կոյն առաջ անցաւ զէպի ձերուներ  
կարմիրովը նրան բարեւելու:

—Ահ, բարով, պարոն վարժապետ,  
բազկաթոռից կիսատ վեր բարձրանա-  
լով, զիմաւորեց կարմիրովը:

Վերջապէս բարեհաճեցիք մեր ստունը  
գալ, եւ եթէ չը հրախրէիք, կար-  
ծեմ բոլորովին չէիք գալու. բայց լը-  
սելովս դուք ուսում առած, նոր ժա-  
մանակի մարդ էք. ուրեմն եւ պէտք  
է քաղաքում տեղաւորվելուց յետոյ  
խսկոյն այցելութիւններ տայիք:

—Այո, ձերդ է, բայց համոզված լի-  
նելով որ դուք փոխայցելութիւն չը  
պէտք է տայիք, որով եւ մենք եր-  
բէք չը պէտք է կարողանայինք բա-  
րեկամութիւն հաստատել, որոշեցի  
բարեկամութիւնս այստեղացի աղա-  
ների հետ այս ձեւով սկսել, եթէ  
պէտքը զգայցիք:

—Օհ, օհ որչափ հպարտ մարդ էք  
եղելու, աչքերը փայլեցնելով, բնդմի-  
ջեց կարմիրովը: Միայն կասկածելով  
որ ձեր այցելութեանը չեն պատաս-  
խանի, դուք այցելութիւններ չէք  
արել:

—Ոչ կասկածելով, այլ համոզ-  
ված լինելով. որովհետեւ ինձ յաւ-  
յայտնի է թէ ձեր քաղաքում ինչ  
տեսակ էք վերաբերվել զէպի ձեր  
ուսուցիչներին:

—Ուրեմն դուք ուզում էք մեզ սո-  
վորեցնել թէ ինչպէս պէտք է վար-  
վենք մեր ուսուցիչների հետ:

—Այո, պարոն, գոնէ ինձ հետ վար  
վելու կերպը:

—Բայց որչափ յանդուգն էք պա-  
րոն, մի քիչ, ինքզինքը զսպելով,  
չըթուանքները գործացնելով շարունա-  
կեցիկարմիրովը:

—Այո, բաւական, մանաւանդ այն  
պիտի պարագաներում երբ ոչ մի վը-  
տանդ չէ սպանում ինձ, ժպտալով  
պատասխանեց Մաղիկեանը:

—Բայց անտանելի էք գոք պա-  
րոն Մաղիկեան, առարկեց ձերուներն,  
նոյնպէս ժպտալով:

—Երբէք տանելի դառնալու փա-  
րագը չուներալով հանդերձ, վրա  
բերեց Մաղիկեանը:

—Չէ, զէպքերս վար եմ գնում.  
թէ է ինձ էլ կարապետ աղայի նման  
դաս կը տաս. հիմա հասկանում եմ  
այն ինչդի գրութիւնը:

առիթով էին ձերուներ եւ Մաղիկեանի  
խօսակցութեան միջոցին ցրվեցին ա-  
ռանց փոթորկի եւ անձրեւի:

Մերուներ կարմիրովը, չ միայն իր  
սան, այլ ամբողջ քաղաքի սարսափն  
էր. նրանից զոգում էին ամենքը,  
նրան հակառակ յատուկ, նրան հակա-  
ճառողը, առանց փորձանքի չէր  
կարող ազատվել նրա ձեռքից. և հի-  
մա Մաղիկեանը ոչ միայն ազատվում  
էր, այլև. ըմբոսա, ինքնակամ ձե-  
րուներն իրան յալթված էր յայտա-  
բարում:

Նա բոլորովին ժպտալով ասեց.

—Իէ, պարոն Մաղիկեան, արի-  
արի մտակ նստի, ես քեզ սիրեցի:  
Կեցցես: Մենք էլ վարժապետներ ենք  
ունենցեր: Նա չը գիտէի: Վարժապետը  
մենակ փոքրերի համար չի, մեծերի  
համար էլ է: Բայց մեր վարժապետ  
ները առհասարակ այդպէս չեն. նը-  
յայնք մեր գործակաւարները չեն  
սարքերվում, աւելի սարկա՞ողի են:  
Նրանք մինչև օրս մեծերին միայն  
իրենց երգերովն էին զարձարում:  
Այս ու այն աղայի փէշից կոչում:

նաւանդ նկարին մէջ նշարուած շար-  
ժուակը մեզ մատնացողը կրնեն առաջ-  
նակաբար վրձին մը եւ կատարելա վար  
պետ մը Պր. Տիրանեանի կտաւին  
մէջ կայ կենդանութիւն. բնականու  
թիւն շարժում եւ կեանք. իսկ բուն  
կողմուածքը (սօ րօզիսթօն) քննադա-  
տութենէ վեր է իր կատարելութեամբ  
ան մը որ մեր բոլոր մաւրիոս նկա-  
րիչներուն—քանի՞ հասունեցած ենք  
կամ ունինք. հետաքրքրի էր իմա-  
նալ—ամբողջովին կը պակաս :

Բայց ո՞վ է այդ պր. Տիրանեանը .  
ի՞նչու Բարիկը գաղթականութենէն  
հետ կ'ապրի . ի՞նչու իր փառաւոր  
տաղանդը, իր նախանձ ազդող վր-  
ձիւնը իր ցեղին վերաբերող նիւթե-  
րու վրայ չի փորձեր . քանի որ ինքը  
հայ է իր ազգանոց հայոց կեանքին  
նուրբիւրով շատ աւելի յաջողութիւն  
կուենայ պր. Տիրանեան . որովհե-  
տեւ գիտնալու է ի՛նչ եւրօպացոց եւ  
մանաւնդ ֆրանսացոց մէջ իրեն  
նմաններ հազարներով կը հաշուին .  
նախապէք բոլոր կատարելութիւն-  
ներուն . այնպէս որ իրեն համար  
խոտ գոռար պիտի լինի իրեն ար-  
ժանի համար մը վայելելու . մինչ  
ընդհանուր կը իր ցեղին վերաբերող  
նիւթեր եթէ ինտրելու լինի երկու  
առաւելութիւններ միանգամայն կու-  
նենայ . նախ անմիջապէս ամբողջ եւ-  
րօպացոց աչքին կը դարձնի իր գործը  
եւ երկրորդ իր ցեղակիցներուն ջով  
համար . պատի եւ դուրսէ հարստու-  
թիւն կը շահի . իր ցեղակառկան նը  
կարներ կը գնուին թէ օտարներէն  
եւ թէ նոյն իսկ հայերէն : Պր. Տի-  
րանեան օրինակ թող անէ մի ինչ  
որ Համար—պէ՛տ որ ներկայացուցած  
է մօլլա մը որ ճարտարտիկ նստած կը  
կարդայ . եւ որ հաւատացած եղէք  
աւելի շատ նշարելի եղաւ . հակա-  
ռակ իր շատ մը պակասութիւններ  
ունի . քան պր. Տիրանեանի մագիս-  
տրական գործը :

Յովհաննէս Կրիզոստոմ  
Այս պարունը նկարած է Լուվրի  
պալատին պատուոյ մեծ սրահը . խոտ  
յաղող կերպով . Այստեղ ալ գոյններու  
խնամութիւնը շարժական լաւ է .  
Լուվրի այդ սրահը որ իրաւումը աշ-  
խարհի հրաշալիքն է մին կը հա-  
մարուի իր սքանչելի հարաւ արդ ու  
գործով . Վեր հայ նկարչին վրձինին

Հա. դու մեր քաղաքի ո՞ր կուսակ-  
ցութեան ես պատկանում .  
—Աշակերտների եւ իմ .  
—Ուրիմն դու նոր կուսակցութիւն  
ե՞ս հիմնել .  
Այ. պայտն . եւ այդ կուսակցու-  
թեան առջեւ պէտք է խնամարկին  
ձեր բոլոր կուսակցութիւնները .  
—Ձե աղբը . ես քեզ հետ զրուս  
չեմ հանել . ձերացած մարդն . գնամ  
հանգստանալու . դուք այստեղ ժա-  
մանակ անցկացրէք . Ուրիւ անգամ  
կը տեսնվենք . բարի գիշեր :

Այս աւելով ձերունին . իր կրօններ  
աղջկայ ուղեկցութեամբ . հեռա-  
ցու գահի ձեռք .  
Նրա զնալուց յետոյ . տիկինները  
եւ օրիորդները սկսեցին . բոլոր միա  
սին .  
—Ինչ տարօրինայ մարդ էք . պա-  
րուն Ծաղիկեան . հօրս իսկոյն գրա-  
ւեցիք եւ նրան հակառակելով . նա  
ձեզ շատ սիրեց . դրա նշանը այն է  
որ ինքը գնաց եւ ձեզ առաջարկեց  
որ մնաք ժամանակ անցկացնէք .  
—Ես ձեզանից վախենում եմ .

տակ մոզական տպւորութիւն մը կը  
թողու գիտողին վրայ .

Այս գործն այնքան նուրբ է որ  
կարծես թէ ոչ թէ նկար մըն է որ  
ներկայացուցեր է պր. Կրիզոստոմ .  
այլ սքանչելի սիմիլարու մը . Պր.  
Կրիզոստոմի վրձիւնը խոտ գորտեր  
եւ սպանով է . սակէ զատ իր ներկայ  
փորձին նայելով մարդ կը զարհուրի  
յարգելի նկարչին համարութեան վրե-  
րոյ . յատկութիւն մը որ խոտ յար-  
գի է պարզ մտկանացութեան համար .  
իսկ արդիւններու համար անհամե-  
մատ քննադատելի . որովհետեւ զրեթէ  
միշտ համարութեամբ եւ յարատե-  
ւութեամբ կը աղթանակեն արդիս  
ներք :

Պ. Կրիզոստոմ Բարիկը մէջ բաւ-  
ական համար ունի իրբեւ զարդարիչ  
Բարիկը Լատինական փաղի մէջ  
գտնուող «Փանթիլոնի սրճարանի»  
ձեղուններու նկարներէն շատերը ա-  
նոր ստորագրութիւնը կը կրեն .

Թէ Պ. Կրիզոստոմ եւ թէ Պ. Տիրանե-  
ան նրբանկարներու յարողին կը  
պատկանին . իսկ Պ. Կրիզոստոմ եւ  
Շապանեան —վերջինս նուազ— որոց  
վրայ հիմայ պիտի խօսինք ձեռագրերու  
զարդաներու կը պատկանին . Այս երկու  
զարդաներու տարբերութիւնն այն է  
որ առաջինները իրենց նկարին մէջ  
ամենափոքր մանրամասնութեանց կը  
մասնեն եւ ամենայն ինչ խնամքով կը  
նկարեն սակէ զատ իրենց ներկը ա-  
մէն տեղ հաւասարապէս քսելով . կը-  
տաւին երեսը հարթ է եւ ողորկ .  
մինչ երկրորդները կատարելա ձեռագր-  
ներ են . այսինքն այն ու ձախ վրձինի  
հարուածներ տալով անմիջապէս նկար  
մը կը յօդինեն . եթէ ձեռք այդ նը-  
կարին վրայէն անցնելու իրեն ձեռ-  
տուքի խորս ու բորսը կը զգաս . այս  
զարդի գործերը մտէ սիրուն չեն .  
բայց հեռուէն շատ սիրուն . այնպէս  
որ որչափ հեռանաս այնչափ կը գե-  
ղեցկանայ . մինչդեռ առաջին զարդի  
գործերը մտէն շատ սիրուն են .  
բայց եթէ մի քիչ հեռանաս բան մը  
չես տեսներ :

Ա. Շապանեան  
Ծ. մանկար մ'է Պ. Շապանեան եւ  
ցուցադրածն ալ ձովանկար մ'է Բայց  
արդեօք Պ. Շապանեանն ալ «Վերջինի»  
նիստս է դարձեր . . . Երկուքս Բարիկ  
ձովանկար մ'է բաւական մեծակա .

պարուն Ծաղիկեան . որոջ եւ յստակ  
խօսելով մէջ մաս կարծիքով երկ-  
րորդ աղջիկը . Հիդիլին . մի թխա-  
ղէմ . առաջնակարգ գեղեցկութեամբ  
վառվորուն . հրաշայտ սչիւրով օրի-  
որդ . Հօրս հետ ոչ մի մարդ չի կա-  
րողանում այդպէս խօսել . Մենք ա-  
մենքս էլ սարսափում ենք նրա նայ-  
ւածքից .  
—Ես . օրիորդ . ձեր հօրից չը վա-  
խեցայ . բայց ինչ մեղքս թագցնեմ .  
դուք ինձ վախացրիք . կարծեմ ես էլ  
ձեր հարկիկ օրինակին հետեւելով .  
ձեզնից պիտի փախչեմ .  
—Բայց դուք ձաղրել էլ գիտէք .  
պարուն Ծաղիկեան .  
—Ոչ . չեմ ձաղրում . ձեզ եմ ա-  
սում .  
—Այդ լաւ չէ . մէջ մտաւ Հեղինէի  
մեծ քոյրը . օրիորդին սյգպէս բան  
չի կայելի տակ . երես կառնի .  
—Հանդիստ եղէք . տիկին . աստա-  
ղը չինք սայ . ասանց աստառի երե-  
սը քանի պէտք չէ .  
Բարձրաձայն ընդհանուր ձեռնաղ ե-  
ղաւ պատասխան Ծաղիկեանի վերջին

խօսքերի .  
Կարծիքովի մեծ տղան . Հեղինէին  
առաջարկեց գաշնակ անել .  
—Մինչեւ պարուն Ծաղիկեանը թա-  
խանաւոր չը խնդրի . չեմ անի . պա-  
տասխանեց Հեղինէն .  
—Բայց ես խնդրելու հետ ծանօ  
թութիւն չունեմ օրիորդ . միջամը-  
տեց Ծաղիկեանը .  
—Ինչպէս չէ . տէրտէրի աղջկան  
միջախնդրում էք . դուք կարծում  
էք թէ մենք չը գիտենք . աչքերը  
կրակ տալով ասաց Հեղինէն .  
—Այն էլ միշտ թերեւս . այսու-  
հետեւ ոչ ոքի չեմ խնդրի . նազ մի  
ձախէք օրիորդ Հեղինէ . ես լսել եմ  
որ դուք լաւ էք անում . անեցէք .  
—Շատ լաւ . կարծեմ . երբ աստառի  
պէտք ունենամ աստան էլ կը տաք .  
այնպէս չէ .  
Հեղինէն սկսեց «Կարմէնի» ամենա-  
կրակոտ կտորներէն միմի .  
Լուսիւնը տիրեց դահլիճում .  
իսկպէս օրիորդը լաւ կը անում . Դաշ  
նակի ձայնը հաւատարմացնում էր որ  
Հեղինէի մէջ էլ կան կարմէնի բնա-

երեկոյ է արեւ մայր մանկու վրայ .  
հեռու հորիզոնին վրայ երկու ման-  
րադիտական կայմեր առագաստաւոր  
ձախ կողմը եւ խոր մի քիչ ցամաք  
իսկ նայածը ձովը իր վէտ վէտ սլ-  
քներով . շափագանցուած կապոյտ գոյ  
ներով . ճառագայթներու վերջին շաւի  
զներ արեւէնկերկարին ձովուն վրայ եւ  
կը ապրումնին մի քիչ . . . Անա այս է  
նկարին նկարագրութիւնը . կը տես-  
նէք որ կարծ եղաւ լայց յանցանքը  
մեր չէ . որովհետեւ բեռլիք ուրիշ  
բան չենք գտներ . անուշտ կերտու-  
մը լաւ է . նկարին մէջ կ'տեսնուի  
շարժում ալ կայ բայց . . . անաստիկ  
ութեւն—ասը տարի կայ որ Պ. Շա-  
պանեան շարունակ սալուն կընդունուի  
եւ շարունակ միևնոյն լանը կը ներ-  
կայացնէ ձով մը . յիշ մը երկիրք  
քիչ մը ցամաք արեւ մը . լուսին մը .  
կէտի նման նու . . .

Տարիները իրար կը յաջորդեն  
բայ իրարու չեն նմանի . կըսէ Պր-  
բանագիրն պարուն Շապանեանի նը-  
կարները տարիներէ ի վեր իրարու  
կը յաջորդեն եւ իրարու . . . փառաւո-  
րապէս կը նմանին .  
Քրանսացի յայտնի ձովանկարնե-  
րէն . եւ ձեր նախկին վարպետ Այլա-  
զովաքիէն օրիւկ անելով . պարուն  
Շապանեան ի սեր Աստուծոյ մի յիշ  
փոփոխութիւն . . . այսակերպով լին  
գրէք ձեր նկարներուն մէջ . . .

Եթէ ուզելու լինիք . մենք հաւա-  
տացած ենք թէ փառաւոր բաներ ո-  
րոնք բնականէն մի յիշ գորս կել-  
լին . կրնաք արտադրել . ուրե՛մն .  
Մենք մինչեւ օրս պարուն Շապա-  
նեանը ճանչցել էինք իր նրբանկար .  
բայց այս տարուան սլովին մէջ ցու-  
ցադրած նկարը զինքն աւելի ձեռնող  
զարդին կը մտնեցէ . սա պակասու-  
թիւն մը չէ . բայց առաւելութիւն  
մ'է . «Տը կուսիլպուզ ի ֆօթօրիպուզ  
նօն սէ հիլլոուդանստու» ըսած է լատի-  
նական ասած մը . ես երկու զարդին  
ալ լաւ գործերը կը սիրեմ .

Կրիզոստոմ  
Կարծեսք օտաջին անգամն է որ  
պարուն Կրիզոստոմն այսօն կընդունուի  
իւր «Արեւելեան կրօն կարանով» որը  
փոքրիկ եւ սիրուն նկար մը է խոտ  
յաղող . կը ներկայացնէ արեւելեան  
«օճախ» մը իւր «արաֆոսով» որուն բու-  
րտութիւնը կ'ախտած են խոհարարու-

ւորութեան որոջ գծերը .  
Ծաղիկեանը կամայ կամայ եւթարկ  
վում էր երաժշտութեան բուն երե-  
ւէյններին . Հեղինէն երբեմն ես էր  
գտնում եւ մի անգամայն նայածք  
դրում Ծաղիկեանի կողմը .  
Յանկարծ Հեղինէն ընդհատեց եւ  
տեղից վեր ցատկելով . դուրս գնաց .  
Ծաղիկեանը կարծես երազից վեր  
թաւ . նա դառնալով Հեղինէի եղ-  
բայրներին ու ջոյրերին ասաց .  
Լաւ է անում . արդեօք ձայն էլ ու-  
նի .  
—Մենք կարծում ենք որ ունի .  
բայց ինքը իր ձայնին չի հաւատում .  
Այս խօսակցութեան միջոցին Հեղի-  
նէն ներս մտաւ . մի մեծ արեւ խնձոր  
բերելով ներս եւ Ծաղիկեանին առա-  
ջարկելով .  
—Կարծեմ հիմա խնձորը համով կը  
գայ . համեցէք .

(Շարունակելի)

թեան վերաբերող գործիքներ . բուն  
օճախին մէջ կը գտնուի երաժշտանի  
«մանդալ» մէջը կրակով . կրակին  
վրայ դրած է հողմաւոր «պտուկ»  
օճախին ներքնակովի պատին վրայ  
կ'ախուած են խոհարարի «սօխառ»  
եւ այլն .  
Պարուն Կրիզոստոմն ձեռնող զարդ-  
ցին կը պատկանի եւ ստոր համարիւր  
գործին բայց մանրամասնութիւնները .  
գոյններու խնամութիւնը եւ ամուս-  
նութիւնը . իրերու գնահատութիւնը  
էլ խօսքով նկարին բոլոր գեղեց-  
կութիւնը նկատելու համար պէտք է  
մի քիչ հեռու կենալ եւ գիտել բա-  
ւական երկար . երկու վայրկեան  
նայելէք յետոյ կարծես նկարին ա-  
մեն մէկ մասը կը ցցուի եւ բոլոր  
ասարկաներն որչապէս կը տեսնուին  
ինչպէս որ են բնականին մէջ .

Պարուն Կրիզոստոմն այս գործը  
խիտա գովելի է կը սիրենք հաւատալ  
թէ սկզբնաւորութիւն մ'է եւ կը յու-  
սանք թէ համանման ուրիշ նկարներ  
կարողութ սակէ յետոյ . . . այսինքն  
նկարներ . տեսարաններ մեր ազգային  
կեանքէն . մեր հօրենական բարքերէն  
եւ սովորութիւններէն . մեր հին մի-  
ջին եւ նոր պատմութեանէն . Անհատ-  
նում միւրեք կան մեր կեանքին .  
Հայու կեանքին մէջ . ճշմարիտ ար-  
դիւտի մը համար . ո՞ն պարուն Կրիզ-  
ոստոմն ձեր ընկերներով անցէք եւ մտէք  
ասպարէզ . . . Միտայն գուք ձեր ցե-  
ղով դրազելով . անոր անցեալին ու  
ներկային կառւի վրայ կենդանու-  
թիւն տալով . համար . հարստու-  
թիւն . անմահա՛նութեան դաճինի-  
ներ պիտի ստանաք թէ ձեր ցեղա-  
կիցներու մէջ եւ թէ օտարներու մէջ .  
Այդ ճամբայն դուրս մի ելնէք . ո-  
րովհետեւ հակառակ պարագային ձո-  
վին կամ ովկիանի մէջ չնչին կաթիլ  
միակ չը պիտի ներկայացնէք . ո՞վ  
Հայ արգիսաներ . . .

Մե իմ Ա. Դաւիթ քեկ



—

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պրիւքսէլի մէջ օտար հայա- սէրներէ, որոնց մէջ կան շատ մը կարուստ անձնաւորութիւններ ժողով մը պիտի կազմուի խորհրդակցելու համար այն միջոցներուն վրայ, որոնցմով կարելի պիտի ըլլայ, ազգել եւրոպական կառավարութեանց վրայ, հայկական խնդիրը կարգադրելու համար:

— Պուլկարիոյ մէջ գտնուած ազգային դպրոցներու մէջ տարեկան հարցաքննութիւնները պիտի ոկսին գալ շաբթու, և գրեթէ մինչեւ ամսոյս վերջը պիտի տեւեն. քանի մը տեղեր ալ արդէն սկսած են:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Խըտիւր շատ սիրալիր ընդունելութիւն գտեր է Սուլթանին կողմէն. Սուլթանը ճիգեր կը թափէ Թասու կղզիին խնդիրը: անուշտ թեմամբ լմնցնել խըտիւրին հետ, քանի որ Անգլիոյ գլուխը թագաւորին հիւանդութեան պատճառով խառն է:

— Յիւրմիլեանը խնդրած է Պուլիս գալ նախ իր շնորհակալութիւնները յայտնելու համար: Երկրորդ իր թեմին քանի մը գործերու կարգադրութեան մասին առաջարկութիւններ ընելու համար:

— Պուլկարական թերթի մը կը գրեն որ Պուլսոյ պուլկար էքզարխութիւնը ոչնչացնելու վերջնական որոշումը տրուած է:

— Մակեդոնիոյ մէջ քանի մը տեղեր պուլկար հյուսիսումբերու և թուրք զօրքերու միջեւ ընդհարումներ տեղի ունեցեր են:

— Պուլսոյ մէջ ժամտախախտ չորս գէպը պատահեր է. առողջապահական խորհուրդը արտակարգ նիստ ըրեր է:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Ազգային ժողովին մէջ փոխառութեան պայմանները խիստ քննադատութեան կը ենթարկուին ընդգրկումը իրենց կողմէն:

— Քարալէլովի կուսակցութիւնը վերջնապէս պառակտեր է:

— Բարիզի դուլկար գործակատարն ալ լիազօր դեպպանի տիւր զօր ընդուներ է:

— Կը լսենք թէ Վառնայի մանածի գործարանին գործաւորները կրկին գործադուլ ըրեր են, որովհետեւ վարչութիւնը հայ գործաւոր մը արձակեր է գործադուլին մասնակցած ըլլալուն համար:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Լեհական թերթ մը կը հաղորդէ որ տեսած են գաղտնի թուղթ մը, Բեթեղապուրկէն լեհաստանի նահանգապետին ուղղուած, որով լեհաստանի նահանգապետին կը հրամայուի լեհական եւ կաթոլիկական խլրտումները բոլորովին արմատախիլ ընել:

ԵՐՐԵՍԿ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Ամբողջ եւրոպական մամուլը համակրութեամբ կը խօսի երրեակ պաշնայնութեան վերանորոգութեան մասին և կը յայտարարէ որ այդ պաշնայնութիւնով աշխարհի խաղաղութիւնը ևս առանել կապահովուի:

Աւելի ուրախութեամբ կը խօսին Գերմանական և Իտալական թերթերը:

Ա Ն Գ Լ Ի Ա

Խաղաղութեան համար եկած օտար հիւրերը արդէն սկսած են վերադառնալ իրենց տեղերը:

Խաղաւորին առողջական վիճակը զոհացուցիչ է. բժշկութիւնը կանոնաւոր կերպով կընթանայ. եթէ թագադրութիւնը կատարուի այլ ևս շատ մը օտար հիւրեր չը պիտի ներկայ ըլլան:

— Լօնտօնը արդէն իր սովորական դիրքը ընդունած է:

— Քիչնէրի Լօնտօն հասնելուն օրը մեծ հանդէսներ պիտի տեղի ունենան, այդ հանդէսներուն պիտի մասնակցին այն զօրքերը որոնք թագադրութեան թափօրին պիտի մասնակցեն:

Գ ԵՐՐԱՆԻՍ

Վիլհէլմ կայսրը մեծ եռանդով ձեռք առած է լեհական խնդիրը. ծրագիր ճառ մը կը պատրաստէ այդ խնդրի մասին. զօր պիտի արտօսանէ Բօզնանէն մեկնած միջոցին:

ԹՐԱՆՍԿԱՍԱ

Բրէթօրիայէն կը հեռագրեն որ լորտ Միլնէր յայտարարած է թէ Թրանսկասալ գաղթելու ուղղութիւնը երկրագործ գաղթականներ չը պիտի ընդունուին:

— Սէլլան կղզիէն կը հեռագրեն որ պօէր գերիներէն մաս մը որոշեր են հոն մնալ. այդ որոշումը տեղական հրամանական գաղթականութեան ուղղեցութեան տակ եղած է: Հրամանական գաղթականութիւնը հնուց ի վեր կը գտնուի հոն, իր լեզուն պահած է և մեծ կարեւորութիւն ունի:

Չ Ո Ւ Ի Ց Ե Ր Ի Ա

Պետական խորհուրդը որոշեր է երկրէն արտաքսել թրքական նախկին հիւպատոս այժմ լորտանս Բարօն Ռիթիսօյէնը:

Ս Պ Ա Ն Ի Ա

Քատիքսի մէջ երկրագործ բանտներու գործադուլ կայ. նոյն տեսակ գործադուլ մը սկսեր է Խերէսի մէջ, ուր անիշխանական ներք մեծ ուժ ունին:

Չ Ի Ն Ա Ս Ս Ա Ն

Ռիթիքսի գործակալութիւնը կիմանայ որ Բէքիւնի ոտս գետպանը Նօթայով գիւանադիտական մարմնոյն յայտարարած է որ Ռուսիա կը հրամարի Խիէնձիւր Չինացիներուն յանձնելու պալմաններու մասին վիճարանիլ և կուզէ որ այդ նահանգը շուտով և առանց ս և է պայմանի մը պարպուի:

— Բէքիւնի մէջ ժամտախախտ շատ մը ղէպքեր նկատուած են. Գերմանացի զինուոր մը մեռեր է. հիւանդութիւնը տեղացիներու մէջ կը տարածուի:

ԱՆՈՒՇԱԽԱՆ

ՀԱՅԻ ՀԱՍԱՐ

կամ

Ա. ՂԱՅԱՆ ՄԸ ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆԸ

Վէպ մը Իրական կեանքէ

Մամոյ տակ

Այս վէպը որ կը պարունակէ իր մէջ տեղական կեանքէ զանազան պատկերներ. հրատարակութեան յանձնուած է հեղինակին կողմէն և սիրով պիտի ընդունուին ըստանորդները հրատարակութեան դիւրութիւն ընծայուելու համար:

Բաժնեգիրն է 4 Ֆրանք. բոսթի ծախքը հրատարակչին վրայ:

Տպագրութիւնը աւարտելուն գրքերը կը յանձնուին բաժնորդներուն:

Պրոյանալիք հասոյթը ամբողջովին կը նուերուի «Հայկական կարմիր իշաչի» ընկերութեան:

Բաժնորդագրութեան համար դիմել հետեւեալ հասցէին:

Մարտոս Երանոսեան

(Պուլկարիա) ՎԱՌՆԱ

Յ Ա Ց Ս Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

«ԲԱՐԿԷՆ ՍԻԿԻՆ» ընթերցարանի մէջ կը ծախուի Ատոմ Եարճանեանի «Գիւցազնօրէն» ի նպատակայ Ուսանողական Միութեան:

Գինն է 1 յէֆ արծաթ. կը ծախուի նաեւ «Նարիպի Ազատութեան Ճանապարհին»:

Գինն է 90 սանթիմ Վառնա

ԱՆՉՆԱՍՊԱՆ ՄԵՌԵԱԼԸ

Յրանայի նշանաւոր վեպասաներէն Ռընէ տը Բօն-ժէի հեղինակութիւնը եղող, խիստ հետաքրքրաշարժ և բարոյալից վէպին

7րդ և 8րդ թերթերը

հրատարակուեցան:

Գիրքը շաբթը երկու թերթ կը հրատարակուի և իւրաքանչիւր թերթը կը ծախուի 5 սանթիմի: Ամբողջ գիրքը 24-25 թերթերէ պիտի բաղկանայ:

Վառնայի համար բաժնեգիրն 1 Ֆր. Ուրիշ քաղաքներու և արտասահմանի համար 1.20:

Վառնայէ դուրս, Պուլկարիոյ և արտասահմանի համար հինգ թերթ մէկ ծրարով կը ղրկուին. փոսթի ծախքը հրատարակչին վրայ է: Դիմել հետեւեալ հասցէին՝ Imprimerie Orientale Onnik Parseghian, Varna.

Դրամի փոխարէն նամակագրոյ՞ մը կ'ընդունուի:

ԹԱՏՐՈՆ „ՊՕՐԻՍ“

Համի Բանաֆօ

Աւառնայի և շրջան

«Վ է Ս է Լ Օ»

Հայ դերասանական խմբին Այս շիշեր ժամը Յիւպիսի Աւրկայսցուի:

Ս Պ Ա Ն Ի Ո Յ

Ծ Ո Վ Ա Ն ԷՆ Ն Ե Ր Ը

Տրամ-Գօմէտի 4 արարուած

ԵՐԳ ԵՒ ՊԱՐԵՐԳ

Պ.Գ. Յակոբեանի և Յ. Բօզաչի կողմէն

Պ Ա Լ Է Դ

Օրիորդ Բարասօյի կողմէն

ԽՊԲԱԿԻՈՒԹԻՒՆ „ՇԱՐԺՈՒՄ“

Կը տպագրուին ամէն լեզուէ ալ յեւտմն, հասցէտմն, նամակազուլի, հարտանկան հրատարակչի, մահապա:

Գինները յոյժ դիւրամատչելի Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին:

ՅԱՆՉՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԼՆԻԿԻ

ОТГОВОРНИКЪ

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна